

4. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

4.1. 2000 թվականի 9 ամիսների ԳՅ վճարային հաշվեկշիռը

Ըստ նախնական տվյալների, 2000թ. 9 ամիսների ԳՅ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի դեֆիցիտը (պակասուրդը) կազմել է 202.7 մլն ԱՄՆ դոլար (հետայսու՝ դոլար), որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 10.6 մլն. դոլարով կամ 5.5 տոկոսով: 2000 թ. 9 ամիսների արդյունքներով, ընթացիկ հաշվի դեֆիցիտը ՀՆԱ-ում կազմել է 16.05%, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի 15.44%-ի դիմաց:

ԳՅ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը, ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2000թ. 9 ամիսների ընթացքում, գոյացել է հիմնականում ապրանքների ներմուծման հաշվին (ապրանքների գծով հաշվեկշռը բացասական է 333.0 մլն. դոլարով և նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ աճել է 16.5 մլն. դոլարով կամ 5.2 տոկոսով):

Ծառայությունների բնագավառում 2000թ. 9 ամիսների արդյունքներով պակասուրդը կազմել է 34.0 մլն. դոլար, նախորդ տարվա 9 ամսվա՝ 41.2 մլն. դոլարի դիմաց, կամ նվազել է 17.4 տոկոսով, ընդ որում՝ ծառայությունների արտահանումը աճել է 0.8 տոկոսով, իսկ ներմուծումը նվազել է 4.6 տոկոսով:

2000թ. 9 ամիսների ընթացքում օտարերկրյա ներդրումների բնագավառում, ընդհանուր առմամբ, նկատվել է որոշակի ակտիվություն: Ընդ որում, արտաքին միջոցների ներհոսքը կազմել է 220.0 մլն. դոլար, որից՝ ուղղակի ներդրումները՝ 99.9 մլն դոլար, այն դեպքում, երբ նախորդ տարվա 9 ամիսներին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել էին 202.7 մլն. դոլար և 91.3 մլն. դոլար:

2000թ. 9 ամիսների ընթացքում պետական պահուստային ակտիվները նվազել են 6.5 մլն. դոլարով (1999թ. 9 ամիսների արդյունքներով տեղի էր ունեցել պահուստային ակտիվների ավելացում 4.0 մլն. դոլարով):

ԳՅ 1999-2000թթ. վճարային հաշվեկշիռների վերլուծական ներկայացումը եռամսյակային և 9 ամսվա կտրվածքով

(մլն. ԱՄՆ դոլար)

	2000 I եռ	2000 II եռ	2000 III եռ	1999 9 ամիս	2000 9 ամիս	Բացարձակ փոփոխությունը	Աճի տեմպը
A. ԸՆԹԱՑԻԿ ԳԱՇԻՎ առանց E խմբի	-88.8	-68.2	-45.7	-192.1	-202.7	-10.6	105.5
Ապրանքներ:							
կրեդիտ	61.0	84.3	74.4	187.4	219.6	32.2	117.2
Արտահանում ՖՕԲ	58.7	81.4	72.1	173.4	212.3	38.9	122.5
Այլք	2.2	2.9	2.2	14.1	7.3	-6.7	52.1
Ապրանքներ:							
դեբետ	-174.0	-205.7	-173.0	-504.0	-552.7	-48.7	109.7
Ներմուծում ՖՕԲ	-171.1	-202.5	-168.9	-488.2	-542.5	-54.2	111.1
Այլք	-2.9	-3.2	-4.1	-15.8	-10.2	5.6	64.7
Հաշվեկշիռ ապրանքների գծով	-113.0	-121.4	-98.6	-316.5	-333.0	-16.5	105.2
Ծառայություններ:							
կրեդիտ	30.0	33.4	33.2	95.7	96.5	0.8	100.8
Տրանսպորտային	12.8	16.5	16.3	39.3	45.7	6.4	116.3
Այլք	17.2	16.9	16.8	56.5	50.9	-5.6	90.1
Ծառայություններ:							
դեբետ	-42.9	-46.8	-40.8	-136.9	-130.5	6.4	95.4
Տրանսպորտային	-27.3	-28.8	-26.0	-76.2	-82.0	-5.9	107.7
Այլք	-15.6	-18.1	-14.8	-60.7	-48.5	12.2	79.9

	2000 I եռ	2000 II եռ	2000 III եռ	1999 9 ամիս	2000 9 ամիս	Բացար- ձակ փո- փոխու- թյունը	Աճի տեմպը
Հաշվեկշիռ ապրանքների և ծառայությունների գծով	-125.9	-134.9	-106.2	-357.7	-367.0	-9.3	102.6
Եկամուտներ: կրեդիտ	22.4	24.4	29.3	63.8	76.0	12.2	119.2
Եկամուտներ: դեբետ	-21.2	-9.7	-9.3	-29.0	-40.1	-11.1	138.3
Հաշվեկշիռ ապրանքների, ծառայությունների և եկամուտների գծով	-124.8	-120.1	-86.2	-322.9	-331.1	-8.2	102.5
Ընթացիկ տրանսֆերտներ: կրեդիտ	40.2	56.8	46.0	150.2	143.0	-7.2	95.2
դեբետ	-4.2	-4.9	-5.5	-19.4	-14.6	4.8	75.2
B. ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ առանց E խմբի	7.0	4.7	5.1	7.2	16.9	9.7	235.5
Կապիտալի հաշիվ: կրեդիտ	7.1	5.0	5.5	9.0	17.5	8.5	195.2
Կապիտալի հաշիվ: դեբետ	0.0	-0.3	-0.3	-1.8	-0.6	1.2	34.4
Ընդամենը խումբ A+B	-81.7	-63.5	-40.6	-184.9	-185.8	-0.9	100.5
C. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ, առանց E խմբի	63.5	63.0	45.6	175.8	172.0	-3.8	97.8
Ուղղակի ներդրումներ այլ երկրներ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	~
Ուղղակի ներդրումներ այլ երկրներից	44.1	35.2	20.3	91.3	99.6	8.3	109.0
Պորտֆելային ներդրումներից ակտիվներ	-0.1	-0.5	-0.9	0.06	-1.46	-1.5	~
Կապիտալի արժեթղթեր	-0.1	-0.2	-0.4	0.01	-0.67	-0.7	~
Պարտքի արժեթղթեր	-0.1	-0.2	-0.5	0.05	-0.79	-0.8	~
Պորտֆելային ներդրումներից պարտավորություններ	-0.1	-0.5	0.3	1.91	-0.28	-2.2	~
Կապիտալի արժեթղթեր	0.3	0.2	0.0	-0.41	0.42	0.8	~
Պարտքի արժեթղթեր	-0.4	-0.6	0.3	2.32	-0.70	-3.0	~
Ակտիվներ այլ ներդրումներից	-29.8	-3.2	-13.6	-26.92	-46.53	-19.6	172.8
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	-24.7	2.5	5.5	-13.1	-16.7	-3.6	127.6
Բանկեր	-7.8	4.4	-20.3	-31.9	-23.7	8.2	74.4
Այլ հատվածներ	2.6	-10.0	1.2	18.0	-6.2	-24.2	~
Պասիվներ այլ ներդրումներից	49.3	31.9	39.5	109.5	120.7	11.2	110.3
Դրամավարկային կարգավորման մարմիններ	1.2	-0.7	1.2	0.8	1.7	0.9	206.6
Պետական կառավարման մարմիններ	21.2	2.5	10.0	56.3	33.6	-22.6	59.8
Բանկեր	9.4	-2.3	0.9	6.0	8.1	2.1	135.1
Այլ հատվածներ	17.5	32.4	27.4	46.4	77.4	30.9	166.6
ԸՆԴԱՄԵՆԸ , խումբ A-ից մինչև C	-18.3	-0.5	5.0	-9.1	-13.8	-4.7	151.4
D. ՍԻՆԱԼՆԵՐ և ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ, ՄԱՔՈՒՐ	5.5	-5.6	5.9	21.8	5.8	-16.0	26.7
Ընդամենը , խումբ A-ից D (ԸՆԴԱՆՈՒՐ ՀԱՇՎԵԿՇԻՈՒ)	-12.8	-6.1	10.9	12.7	-8.0	-20.6	~
E Ֆինանսական հոդվածներ.	12.8	6.1	-10.9	-12.7	8.0	20.6	~
Պահուստային ակտիվներ	12.0	3.8	-9.3	-4.0	6.5	10.5	~
Ֆոնդի վարկի օգտագործում	-4.3	-2.3	-6.2	-8.7	-12.8	-4.1	147.4
Հատուկ ֆինանսավորում	5.0	4.6	4.6	0.0	14.2	14.2	~